

**ԱՐՑԱԽՅԱՆ ԲԱՆԱԴՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ  
ԻՄ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Հայ ժողովրդի արևմտահայ հատվածի շրջանակներում ծավալած բանահավաքչական և բանագիտական 50-ամյա գործունեությանն ընթացքում, Արցախն ու նրա ժողովրդական մշակույթը ևս մշտապես գտնվել են իմ մասնագիտական հետաքրքրությունների ոլորտում:

1970-ական թվականներին ձեռնամուխ եմ եղել «Արցախ-Ուտիք» ժողովրդական հեքիաթների հրատարակման աշխատանքներին: Այն իմ աշխատասիրությամբ, լույս է տեսել 1973 թ. «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության 6-րդ հատորում, որն ընդգրկում էր 182 հեքիաթների բնագրեր իրենց բարբառային նրբերանգներով, ինչպես նաև պատմաբանագիտական ակնարկ, ծանոթագրություններ և բարբառային ու դժվար հասկանալի բառերի բառարան<sup>1</sup>:

Պատահական չէր, որ ինձ հանձնարարվել էր հիշյալ հատորի կազմման աշխատանքը: Արցախի լեզվամշակութային առանձնահատկություններն ինձ հոգեհարազատ էին դեռևս 1960-ական թվականներին: Նախապես տեղեկացված լինելով Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի Պյատիգորսկ քաղաքում բնակություն հաստատած հայերի, մասնավորապես մեծամասնություն կազմող արցախահայերի մասին, 1964 թ. Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից անհատապես գործուղվել եմ այնտեղ՝ պարզելու նրանց ինքնությունը, թե՛ ե՞րբ և որտեղի՞ց են գաղթել, տեղաբնիկների հետ համակեցության պայմաններում նրանց էթնոհոգեբանության մեջ կատարված տեղաշարժերը, արդյո՞ք հոգե-

---

<sup>1</sup> «Արցախ-Ուտիք», Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, ԳԱ հրատարակություն, Երևան, 1973:

հարազատ են մնացել բնօրրանի ավանդույթներին և այլն<sup>1</sup>:

Պյատիգորսկ քաղաքում, առանձին թաղամասում բնակվող հայ համայնքի ներկայացուցիչներից, առաջինն իմ ուշադրությունը գրավեցին տնակների առջև նստած արցախահայ տարեց կանայք իլիկը ձեռքներին, Ղարաբաղի յուրատիպ տարազով, որոնք աչքի էին ընկնում հատկապես սև ու կանաչի կամ մանուշակագույնի համադրությամբ: Նրանց ճակատնոցները զարդարված էին արծաթյա դրամներով, իսկ «հալավի» (շապիկ) և «ղաբայի» (վրանոց) թևերի ծայրերն արծաթյա զարդանախշերով ձևավորված բոժոժներով: Մեջքին կրում էին արծաթյա, ոմանք էլ կտորից «կյոտե» (զոտի), որն էլ մշտապես ուղղածիզ էր պահում նույնիսկ զառամյալ կանանց պիրկ կեցվածքը: Առաջին իսկ տպավորությունս գրավիչ էր և հուսադրող. արտաքնապես բնօրրանի տեղային երանգը պահպանած կանայք, անշուշտ, իրենց հոգում և մտքում անթեղված պետք է պահպանեին նաև իրենց մախնիներից ավանդված հոգևոր արժեքները:

Մտերմիկ զրույցի ընթացքում պարզվեց, որ նրանցից շատերը Արցախից գաղթել էին դեռևս 1905 թ., խույս տալով ազգամիջյան խլրտումներից, իսկ հետագայում 1921 թ., երբ խորհրդային Սիւրբյան կառավարությունը ի դեմս Լենինի Նախիջևանը, Արցախը և Գանձակը շնորհեց Ադրբեջանին, օրեցօր սկսեց վատթարանալ հայերի վիճակը նպաստելով արտագաղթի նոր ալիքների: Թեպետ խորհրդային սահմանադրությամբ բացառվում էին ազգային խտրականության դրսևորումները, սակայն փաստն այն էր, որ ազերիների վարած հայատյաց քաղաքականության հետևանքով, կամաց-կամաց դատարկվում էին Նախիջևանը, Արցախը, Գանձակը և այլ հայաբնակ վայրեր: Շատերն աշխատանք և ապահով կյանքի պայմաններ գտնելու հույսով գաղթում էին Սունգայիթ, Բաքու կամ Ռուսաստան: Պյատիգորսկ քաղաքի մոտակայքում գտնվող հայկական այդ թաղամասը, ուր ապրում էին հայերը, ռուս տեղաբնիկներն անվանում էին «Արմյանսկի Նյու Յորք» (հայկական Նյու Յորք):

---

<sup>1</sup> 1964 թ. ամռանը անհատական գործուղման ընթացքում Պյատիգորսկ գաղթած արցախահայերից մեր գրառած ժողովրդագիտական նյութերն ամփոփել ենք «Նմուշներ Ստավրոպոլի մարզի հայ ժողովրդական բանախյուսությունից» ձեռագիր ժողովածուի մեջ, որը պահվում է ՀՀ ԳԱԱ Հեռագիտության և ազգագրության ինստիտուտի բանախյուսության արխիվում, Վերժինե Սվազյանի ֆոնդ, FS: 3444-3648 (այսուհետև՝ ՀԱԻ):

Արցախահայ գաղթականներն այնտեղ ապրում էին համեստ, բարեկեցիկ, արժանապատիվ և հայաշունչ կյանքով: Նրանց համար, որպես հայկական եկեղեցի էր ծառայում ռուսական մի հին կառույց, որտեղ պատարագ էր մատուցվում միայն այն ժամանակ, երբ հայ քահանա էր ժամանում: Արցախահայերն ապրում էին համախումբ, խուսափում էին օտար անուսնություններից, թեպետ արդեն նկատվում էին որոշ դեպքեր: Չնայած երեխաները հաճախում էին մոտակա ռուսական դպրոցը, բայց տան խոսակցական լեզուն արցախի բարբառն էր: Տղամարդիկ աշխատում էին տեղի գործարաններում, այդ պատճառով իմ բանասացները բացառապես 50-90 տարեկան տնային տնտեսուհիներ էին:<sup>1</sup> Աննա Ակոպյան (88 տարեկան), Սոնյա Դանիելյանը (71 տարեկան), Մայկո մայրիկը, Անուշկա մայրիկը: Ավելի երիտասարդ 60-69 տարիքային խմբում՝ Աստղիկ Հարությունյանը, Թանգե Սարգսյանը, 50-59 տարիքային խմբում՝ Աշխեն Վանիլովը, Հադրութի Վանք գյուղից Լուսիկ Սարգսյանը և ի վերջո, որպես բացառություն, երեքամյա Սարգարիտ Ավագյանը, որն Արցախի բարբառով արտասանում և երգում էր մեծերից սովորած մանկական երգեր, կատակերգեր և շուտասելուկներ: Նրան երբ հարցրեցի. - Մամադ որտե՞ղ է աշխատում:

Պատասխանեց. - Ռոդ դոնը (ծննդատուն):

- Ի՞նչ է անում:

- Խոխա յա բըռնըմ»,<sup>2</sup> - եղավ պատասխանը:

Ընդամենը 20 օրվա ընթացքում Պյատիգորսկի արցախահայ հազիվ երկու հազարի հասնող այդ համայնքից, ես գրառել եմ ավելի քան 100 միավոր բանահյուսական նյութեր:

Խնդրո առարկա նյութերը վիպական և քնարական բնույթի են. հրաշապատում հեքիաթներ (7), իրապատում հեքիաթներ (2), առակներ (2), առածներ (10), հանելուկներ (8), շուտասելուկներ (2), օրինանքներ (10), մանկական թոթովանքներ (5), խաղիկներ (20), սիրո երգեր (3), օրորոցայիններ (4), աշխատանքային երգեր (5), զինվորի երգեր (6), եղերերգեր (2), կատակերգեր (4), ծիսական (տոնական և հարսանեկան) երգեր (4) նաև հարսանեկան ծեսի նկարագրություն (1),

---

<sup>1</sup> Պյատիգորսկ գաղթած արցախահայ բանասացների մասին կենսագրական մանրամասն տեղեկություններ են տրված մեր հիշյալ անտիպ ժողովածուի մեջ. ՀԱԻ, FS: 3444-3648:

<sup>2</sup> ՀԱԻ, FS: 3530:

բանասացների մասին կենսագրական տվյալներ և դժվար հասկանալի բառերի բառարան:

Վիպական բանահյուսությունից գրառել են **հրաշապատում** և **հրապատում հեքիաթներ**, որոնք սյուժետային բովանդակությամբ և մոտիվային համակարգով մեծապես առնչվում են պատմական Հայաստանի և Կիլիկիայի հայ ժողովրդական հեքիաթներին. «Օխձ (օծ) տղան», «Անմահական ջուրը», «Երեք ախպոր հեքիաթը», «Թագավորի աղչիկը», «Օվչի Փիրունը» և այլ հեքիաթներ<sup>1</sup>:

Արցախահայերի հրաշապատում հեքիաթները սկսվում էին ավանդական «իլալ ա, չիլալ» բանաձևով, սակայն ոչ միշտ էին ավարտվում երկնքից ընկնող երեք խնձորի վերջաբանով, այլ ավարտվում էին շատ ավելի կտրուկ որևէ գործողությամբ՝ «էն տղին կապըմ են ձիան հաքվիցը, թողնըմ են հարձակ դաշտերը»<sup>2</sup> և կամ՝ ավելի կարճ «վոտ ի վսյո» (ահա բոլորը) արտահայտությամբ<sup>3</sup>: Անշուշտ, սա նոր՝ ռուսական միջավայրի ազդեցությունն է, որը նաև առիթ է տվել զգալի չափով փոխառյալ բառերի ու արտահայտությունների ներթափանցման: Օրինակ՝ մոմենտ (պահ), ստոլ (սեղան), ուժե (արդեն), կամպանիա (ընկերություն), կուկլա (տիկնիկ), կակրազ (հենց այդ), պրեդանիա (օժիտ), յելի-յելի (հազիվ-հազ), մաղարիչ (մվեր), դարավուլ (պահակ) և այլն: Նման ներթափանցումներն օրինաչափ են, հատկապես համակեցությամբ ապրող ժողովուրդների կենցաղում:

**Իրապատում հեքիաթներից**<sup>4</sup> ուշագրավ է հատկապես «Շահ Աբասն ու հալևորը»: Իր զավթողական արշավանքներից հղփացած Շահ Աբասը ծիծաղում է խուրմայի (արմավի) ծառ տնկող ալևորի վրա, ասելով, թե նա չի հասցնի համտեսել իր ցանած ծառի պտուղը, քանի որ մահը մոտ է: Արցախցի խելացի ալևորն իմաստուն պատասխան է տալիս. «Ա՛յ, ախպեր, մըհենգյէլ (հիմա) ես ծըծաղըմ քեզ յերա: Մեր պապերը տնգալ են, մունք կերալ ընք, մըհենգյէլ մունք պըտի տնգինք, հանցու վեր մեր հետագաները օտին»<sup>5</sup>:

<sup>1</sup> ՀԱԻ, FS: 3460-3461, 3472-3481, 3482-3489, 3514-3530, 3540-3556, 3592-3595, 3620-3629:

<sup>2</sup> ՀԱԻ, FS: 3556:

<sup>3</sup> ՀԱԻ, FS: 3480:

<sup>4</sup> ՀԱԻ, FS: 3590-3591, 3600-3603, 3636:

<sup>5</sup> ՀԱԻ, FS: 3603:

Գրառված էրկու **առակները**. «Մուկն ու վեթեռը»<sup>1</sup> և «Վեթես մոքիրը»<sup>2</sup> համահայկական հայտնի սյուժեներ են, որոնց միայն գործող անձանց կենդանական կերպարներն են փոխված, այսինքն՝ տեղայնացված, հարմարեցված Արցախի կենդանական աշխարհին:

Արցախին բնորոշ կենդանական և բուսական աշխարհը, մարդկանց կյանք ու կենցաղին հատուկ պարագաներն են գաղտնագրված կերպով ներկայանում **հանելուկների**<sup>3</sup> մեջ. դրանց հարցադրման ձևն ինքնին ինքնատիպ է.

«Մըզ մինն օնինք կըկընաչի,  
Կըծաղկի, կըսիվտակի, կըկյիրմիրի,  
Յետնան էլ կըսըվանա»<sup>4</sup>:  
(Մոշ)

Կամ՝

«Մըզ մինն օնինք.  
Աշխարքս շոռ ա կյամ,  
Ուրուգյունը կյամ ա տռանը  
Վեր ածըմ»<sup>5</sup>:  
(Տրեխ)

Ուշագրավ են այլաբանական իմաստ արտահայտող **առածները**<sup>6</sup>.

«Սարը սարին նի չի կյամ,  
Մարդը մարդին նի յա կյամ»<sup>7</sup>:  
Եվ կամ՝  
«Ոչխարի տմակիցը էօտըմ չըմ,  
Քմական մոտիկ ա»<sup>8</sup>:

Արցախահայոց **առածները** բարբառային արտաբերումով առանձին հմայք են ստանում՝ դառնալով տեղային նոր տարբերակ:

---

<sup>1</sup> ՀԱԻ, FS: 3596-3599:

<sup>2</sup> ՀԱԻ, FS: 3630-3635:

<sup>3</sup> ՀԱԻ, FS: 3490-3492:

<sup>4</sup> ՀԱԻ, FS: 3490, 1:

<sup>5</sup> ՀԱԻ, FS: 3490, 2:

<sup>6</sup> ՀԱԻ, FS: 3534-3535:

<sup>7</sup> ՀԱԻ, FS: 3534, 7:

<sup>8</sup> ՀԱԻ, FS: 3534, 9:

Բարեպաշտությամբ և լավատեսությամբ են տոգորված **օրհնանք-բարենաղթանքները**.

«Ազատ, երկար կյանք ունընըս»<sup>1</sup>:

Այստեղ ուշագրավ է ազատության գաղափարի առաջնայնությունը, որը խիստ բնորոշ է ազատատենչ արցախցիցիներին: Եվ կամ՝

«Հինչ նեղութին քաշըմ իս,  
Բախտավոր ըլի վերջը»<sup>2</sup>:

Համայն աշխարհի մարդկությանը խաղաղություն և բարօրություն է մաղթում հետևյալ օրհնանքը.

«Երկրագունդը թող բարի երագով ապրի»<sup>3</sup>:

Գրառված նյութերում **քնարական բանահյուսության** տեսականին իր բնույթով բազմազան է: Նրանցում առկա են բնության, սիրո, պանդխտության մոտիվները: **Խաղիկներում**<sup>4</sup> հնչում են հիմնականում սիրո, կյանք ու կենցաղի տարաբնույթ կողմերը.

«Հաց ըմ թըխալ, կյարի յա,  
Իմ յարըս սափարի յա,  
Սափար էրթալիտ մեռնիմ,  
Խոսքերըդ շաքարի յա»<sup>5</sup>:

Գրառված խաղիկներից մեկում, ամենայն հավանականությամբ, ակնարկվում են ազգամիջյան փոխհարաբերությունները.

«Այ տղա, տոն արի,  
Վեններըտ շաղավն արի,  
Էս թաղը ղըլմըղալ ա,  
Երի թաղավն արի»<sup>6</sup>:

Արցախում տղամարդկանց պանդխտելը հարազատների կողմից չի խրախուսվել. հատկապես մավթարդյունաբերության կենտրոն Բաքու, որտեղ բազմաքանակ հայեր ստիպված գնում էին աշխատանք որոնելու.

---

<sup>1</sup> ՀԱԻ, FS: 3534, 4:

<sup>2</sup> ՀԱԻ, FS: 3534, 3:

<sup>3</sup> ՀԱԻ, FS: 3534, 6:

<sup>4</sup> ՀԱԻ, FS: 3558-3561, 3612-3615:

<sup>5</sup> ՀԱԻ, FS: 3558, 3:

<sup>6</sup> ՀԱԻ, FS: 3560, 3:

«Ծառի տակը լաքի յա,  
Իմ յարը Բաքի յա,  
Բաքվա սարը թող շոռ կյա,  
Բալքի իմ յարը տոն կյա»<sup>1</sup>:

Ուշագրավ է, որ չար թշնամու կերպարն արտացոլվել է նաև **օրորոցային երգում**<sup>2</sup>, երբ մայրը չքնացող երեխային վախեցրել է դաժան խանի կերպարով.

«Լա՛յ, լա՛յ, լա՛յ արա, քնիր.  
Ձելիմ խանը կըկյա, քեզ կըտանի,  
Բա՛յ, բալա, բայ, կուկլա բալա»<sup>3</sup>:

Վերջին կրկնակը ռուսական օրորոցայինից է փոխառնված:

**Գրառված սիրային երգի**  
«Նազիկ, նազիկ, նազ մի՛ անի,  
Չուխեթ քաշի, թոզ մի՛ անի»<sup>4</sup>

տողերն ակամայից հիշեցնում են կիլիկյան՝ Քեսապի, մի սիրո նմանատիպ պատկերը.

«Ամա՛ն, իշգե՛յն, ծիր վաթանը Ա՛յ, աղջիկ, ձեր հայրենիքը  
յօ գըննօ. որտե՞ղ կլիմի,

Շյուդ մը ժգըդվէ չախշօրիտ Շատ մի շորորա, քղանցքդ  
մըրօդ գըննօ»: կփոշոտվի»<sup>5</sup>:

Պյատիգորսկի արցախահայերը **ծիսական երգերից** հիշում և երգում էին «Ձեզ Բարիկենդան, մեզ բարի Ջատիկ» երկարապատում տոնական երգը<sup>6</sup>, իսկ ծիսական տոները նախկին ձևով գրեթե չէին կատարվում այլևս:

Սակայն հիշում և երգում էին **Չամբարձման տոնին** երգվող հատ ու կենտ քառյակներ.

---

<sup>1</sup> ՀԱԻ, FS: 3614, 2:

<sup>2</sup> ՀԱԻ, FS: 3462-3465:

<sup>3</sup> ՀԱԻ, FS: 3464, 2:

<sup>4</sup> ՀԱԻ, FS: 3588, 1:

<sup>5</sup> **Սվազյան Վ.**, Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1994, էջ 127:

<sup>6</sup> ՀԱԻ, FS: 3570-3575:

«Ախչի, ուր ես, դուն հուր ես,  
Ես ծարավ եմ, դուն ջուր ես,  
Համբարձում օրը դուն ու՞ր ես,  
Արի ըստեղ պար բռնենք:  
Հայլո՛ ջան, հայլո,  
Համբարձում, հայլո»<sup>1</sup>:

Նրանք ափսոսանքով էին վերհիշում բնօրրանում Համբարձման ժամանակ ձեռք-ձեռքի բռնած իրենց երգն ու պարը: Քանի որ նոր միջավայրում այլևս նման հավաքական տոնախմբություններ չէին կատարում:

**Հարսանեկան ծեսը**<sup>2</sup> նեղ շրջանակում դեռ պահում էր որոշ ավանդական երանգներ, ինչպես օրինակ հարսի գլխին մանրադրամներ և չիր ու քաղցրեղեն տեղացնելու և նրա ոտքի տակ ափսե կոտրելու սովորությունները: Ծիսական արարողակարգն բավական մանրամասն գրի են առել մեջբերելով նրան առնչվող երգերը ևս: Հուզիչ է հարսի հրաժեշտի երգը.

«Վա՛յ, ազի ջան, տանում ըն,  
Հորաց, մորաց հանում ըն,  
Վա՛յ, ազի ջա՛ն, տանում ըն,  
Ազիզ մորացը հանում ըն»<sup>3</sup>:

Երբ հարսը ոտք էր դնում փեսայի տուն. «մաշալա» էին վառում, դուրս էին բերում փեսայի առաջ երգելով.

«Վա՛յ, ազի ջան, աչքդ լուս,  
Տղադ պերենքյ, հարսդ պերենքյ,  
Եկած պարիկամներիդ աչքը լուս»<sup>4</sup>:

«Տղի տանը հաց են օտըմ, պրծնըմ, սազանդարը նստըմ է, տղի բարեկամները փող են տալիս, կահույք, սնդուկ, կուվշին (փարչ) և այս բոլորի մասին բարձր ձայնով հայտարարում է տեփ ածողը (թմբկահար): Հարսը, որ ներս է մտնում, նրա ոտքերի տակ ամաններ են կոտ-

---

<sup>1</sup> ՀԱԻ, FS: 3560, 2, 4:

<sup>2</sup> ՀԱԻ, FS: 3468, 2-3470:

<sup>3</sup> ՀԱԻ, FS: 3468, 1:

<sup>4</sup> ՀԱԻ, FS: 3470:



րում, խմում խնամիների, հարս ու փեսի կենացը»<sup>1</sup>:

Գրառված **աշխատանքային երգերը** ևս հիմնականում ավանդական բնույթ ունեն. «Ձիգ տուր, քաշիր, ա՛յ եզո»<sup>2</sup>, «Հով արա, ջեյրան ջա՛ն»<sup>3</sup> և կամ՝ «Մոթալ, մոթալ, ջա՛ն մոթալ»<sup>4</sup>:

Նրանց երգացանկում կային նաև նորոյա կոլտնտեսային կյանքին նվիրված գրական լեզվով ժողովրդականացած երգեր, ինչպիսին էր.

«Ծլել է արտս, ծփում է արտս,  
Կորել է դարդս, ջա՛ն,  
Եկել է նորը, խնդության օրը,  
Գյոզալ տրակտորը, ջա՛ն»<sup>5</sup>:

Խորհրդային ժամանակների նորոյա ինքնատիպ երգերից են Կանանց միջազգային տոնին՝ մարտի 8-ին նվիրված երգը.

«Լաչակդ բաց, ա՛յ նանի,  
Քիթկալդ բաց, ա՛յ նանի,  
Թող արև տա, չորանա  
Արցունք ու լաց, այ նանի:

Ինչքան չանադ կապ մնաց,  
Տափակել ա, ա՛յ նանի,  
Քիթ ու բերանդ ծռնովել,  
Տես վիճակդ, ա՛յ նանի:

Հոկտեմբերը քեզ համար  
Նոր կյանք բերավ, ա՛յ նանի,  
Ցուրտ ձմեռը վերացավ,  
Գարուն դարձավ, ա՛յ նանի,

Ականջների բաց արա,  
Էսօր մարտի 8-ն ա,

---

<sup>1</sup> Անդ:

<sup>2</sup> ՀԱԻ, FS: 3566-3567:

<sup>3</sup> ՀԱԻ, FS: 3498, 1, 2:

<sup>4</sup> ՀԱԻ, FS: 3530-3531:

<sup>5</sup> ՀԱԻ, FS: 3576-3577:

Շարաշ կանչի, ծափ արա,  
Կանանց տոնն ա, ա՛յ նանի»<sup>1</sup>:

Առաջին հայացքից նոր իմաստ ու բովանդակություն արտահայտող այս երգում, գարնան զարթոնքի, ձմռան դեմ տարած հաղթանակի, իրական աշխարհի զգացողության խորհուրդն է ամփոփված: Ավանդական բանահյուսության մեջ բազում գործառույթներով օժտված Նանեին ոգեկոչելով ազատելու բնական, կանացի հմայքները խաթարող հանդերձանքից, երգ ու պարով, խրախճանքով վերահաստատվում է գարնան զարթոնքը և կանանց տոնը դիմավորելու նրա պատրաստակամությունը: Այստեղ միաժամանակ նկատելի է մայր բնության և նահապետական հայ կնոջ ինքնագիտակցության զարթոնքի անխզելի կապն ու մերձեցումը:

Տարածված **երգիծական երգերից է.**

«Քույրիկիս՝ տուփլի, գալոշ,  
Մայրիկիս՝ կոշիկներ,  
Իսկ հայրիկիս՝ մի զույգ տրեխ  
Էն էլ փոկեր չունենա»<sup>2</sup>:

Արևմտահայոց (հիմնականում պոլսահայոց) շրջանում տարածված գավեշտական բազմաթիվ պատկերներով շարահյուսված այս երգերը երգում էին հատկապես երիտասարդները:

Պյատիգորսկում իրենց ավանդական ապրելակերպին խորթ և անհարիր երևույթներն արցախահայերն անվարան երգիծում էին.

«Կիսլավոդսկի օրիորդները  
Ժամը տասին են զարթնում,  
Մաշքը (մեջք) կտորած կատվի նման,  
Ման են կյալի բուլվարում»<sup>3</sup>:

Ռուսական նոր միջավայրը, մարդկային նոր հարաբերությունները ևս լեզվական նորամուծությունների պատճառ են դարձել.

---

<sup>1</sup> ՀԱԻ, FS: 3578:

<sup>2</sup> ՀԱԻ, FS: 3506-3509:

<sup>3</sup> ՀԱԻ, FS: 3568:

«Ծիտը ծառին տիտիկ արավ,  
Ախտոնիկը (որսորդ) ուբիտ արավ (սպանեց),  
Ոտնան բռնավ դամոյ (տուն) տարավ,  
Ժառովնիկուն (տապակ) ժառիտ արավ (տապակեց),  
Նստեց մի լավ կուշիտ արավ (կերավ),  
Ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ»<sup>1</sup>:

Սակայն իրենք՝ Պյատիգորսկ գաղթած արցախահայերը, չէին ընդունում, որ իրենք սկանայից տուրք են տալիս լեզվական փոխառություններին և ասում էին. «Նաաբարոտ (ընդհակառակը) մունք չիստի (մաքուր) արմյանսկի (հայերեն) ենք խոսում»<sup>2</sup>:

Թեպետ Պյատիգորսկ գաղթած արցախահայերի բառային ֆոնդը ռուսերենից զգալի ազդեցություններ էր կրել, սակայն նրանք իրենց ազգային ինքնությունն ու արցախահայի արժանապատվությունը շարունակում էին բարձր պահել: Այդ հանգամանքն իր գեղարվեստական արտացոլումն է գտել հատկապես նրանց զինվորի և հայրենասիրական երգերի մեջ<sup>3</sup>:

**Ձինվորի երգի** մի մուշ են գրառել նաև Ասկյարանի մասին, որտեղ հիշատակվում է Հայաստանի հերոսական անցյալը և արցախահայ երիտասարդի պատրաստականությունն ազգի համար զոհվելու.

«Ասկյարանի բերդի միջին  
Կոտորում են թշնամուն,  
Ինչպե՞ս կորավ քաջ Վարդանը,  
Համազասպի քաջ անուն...  
Սուրերս տուր, մայրի՛կ,  
Մոսենս տուր, քույրի՛կ,  
Թե որ ազգիս չզոհվեմ,  
Ինչու՞ հապա ծնվեցի ես»<sup>4</sup>:

Հայրենական պատերազմի տարիներին ստեղծված որոշ երգեր իրենց ուրույն տեղն են գտել նաև նրանց երգացանկում.

---

<sup>1</sup> ՀԱԻ, FS: 3618, 1:

<sup>2</sup> ՀԱԻ, FS: 3618, 2:

<sup>3</sup> ՀԱԻ, FS: 3586-3587, 3604-3611:

<sup>4</sup> ՀԱԻ, FS: 3606, 1:

«Առավոտյան ժամը ութին,  
Ինձ վայենկոմատ (զինկոմիսարիատ) կանչեցին,  
Վեշ մեշոկս (ուսապարկ) շալակս տվին,  
Դեպի Կերչը ուղարկեցին»<sup>1</sup>:

Երկարաշունչ այս երգի վերջում, անօգնական ու անհույս ընկած մահամերձ զինվորը վերջին շնչում խնդրում է.

«Ընկերներ ջան, հավաքվեցեք,  
Դուդուկները փչիլ տվեք,  
Գերեզմանիս քարին վրեն  
Սայաթ-Նովեն երգել տվեք»<sup>2</sup>:  
Եվ շունչը փչում է հազիվ ասելով.  
«Չե՛մ մոռանա Մայր Հայաստան»<sup>3</sup>:

Մայր Հայաստանի կարոտը մշտապես ուղեկցել է օտարության մեջ ապրող հայերին այդ թվում նաև Պյատիգորսկ գաղթած արցախահայերին: Նրանց մեջ կային նաև ինքնուս ստեղծագործողներ, ինչպիսին էր 58-ամյա Աշխեն Մուսայելի Վանիլովը: Նա իր մտորումներն արտահայտում էր չափածո հանգավորումով և երգային կատարումով: Նրա երգած **եղերերգի** սեղմ տողերի մեջ խտացված էր արցախահայոց կրած անլուր տառապանքները, նրանց հարկադրված գաղթը բնօրրանից և անխախտ հավատքն ապագայի նկատմամբ: Ժողովրդական այս ստեղծագործության լավատեսական ավարտը, թվում է, աղոթք լինի առ Աստված: Այն մաղթանք է նաև ուղղված համայն մարդկությանը.

«Դարդոտ, կարոտ կյանքերի մեջ,  
Տանջվեցինք մունք անհանգիստ,  
Դաղված, էրված ջիգյարներով,  
Մնացինք մունք անհանգիստ,  
Մունք շատ մեծ ցեղ ունեինք,  
Բոլորին էլ կուրցրեցինք.  
Եկենք, հասենք Պըտիղորսկ,

---

<sup>1</sup> ՀԱԻ, FS: 3604:

<sup>2</sup> ՀԱԻ, FS: 3606:

<sup>3</sup> ՀԱԻ, FS: 3610:

Նիուժե՞լի (մի՞թե) մուսք կարել չընք  
Հանգիստ մնանք էս տանջանքից.  
Թող մեր Հայոց ազգին.  
Էն ուժ ու պատիվը տան,  
Որ իլալ ա հին-հին վախտից,  
Թող փրկի տերը սաղ աշխարքին,  
Լոխ էլ հանգիստ ապրին, երջանիկ»<sup>1</sup>:

Արցախցի կնոջ մարգարեական խոսքերն արդեն 15 տարի է, որ իրականություն են դարձել: Հայաստանն ու դուրսագնական Արցախ աշխարհը նվաճել են ազատ ու անկախ ապրելու իրենց պատմական իրավունքը:

1988 թ. արցախյան շարժման վերելքի տարիներին արևմտահայերից իմ գրառած բանահյուսական նյութերում, Կիլիկիայից գաղթած հայերը ևս իրենց հստակ վերաբերմունքն արտահայտել են հետևյալ տողերով.

«Ղարաբաղը մեր փոքրիկ  
Մասն է Հայոց աշխարհի,  
Ինչո՞ւ թողնենք օտարին,  
Երբ հայերն են հոն բնիկ»<sup>2</sup>:

Եվ ժողովրդական երգը հնչում է որպես միասնական պայքարի համազգային պատգամ.

«Մեր հայ եղբայրներ, մենք շատ լռեցինք,  
Բավական է մեզ այսչափ համբերենք,  
Մեր Ղարաբաղը մեզնից խլեցին,  
Հիմա ուժ ունենք ետ առնենք նորից»<sup>3</sup>:

Արցախահայոց պատմական այդ մեծ խիզախումը դարձել է նաև արևմտահայերի ստեղծագործական ներշնչանքի աղբյուր, քանզի արցախյան ազատամարտը մարմնավորում է նաև իրենց կորցրած Երկրի ազատագրման չիրականացած երազը...

---

<sup>1</sup> ՀԱԻ, FS: 3580:

<sup>2</sup> Սվազյան Վ., նշվ. աշխ., էջ 204:

<sup>3</sup> Անդ:

Ավելի ուշ Ստամբուլի (1996 թ.) և Լոս Անջելեսի (2001 թ.) ծերանոցներում Հայոց ցեղասպանության ականատեսների հուշերն ու վկայությունները գրառելիս, վերապրողներից շատերն անընդհատ հետաքրքրվում էին Արցախի հիմնահարցի վերաբերյալ՝ դրսևորելով իրենց որոշակի վերաբերմունքն իրենց իսկ հաղորդած բանավոր խոսքի մեջ<sup>1</sup>:

Առավել հուզիչ են Դեր-Էլ-Ջորում (2005 թ.) եղեռնից վերապրածների երրորդ և չորրորդ սերունդների ներկայացուցիչների հետ իմ հանդիպումները: Նրանցից շատերն արդեն կես-արաբ, կես-քուրդ ընտանիքներից էին, որոնք կորցրել էին իրենց մայրենի հայերեն լեզուն և քրիստոնեական հավատքը, սակայն նախնիների արյան կանչով, դեռևս շարունակում էին իրենց հայ զգալ: Լսելով, որ Արցախն ազատագրված է և այնտեղ գնացող-հաստատվողին կառավարությունը հող է տալիս, որ վարի, փող է տալիս, որ տուն կառուցի: Ուստի նրանք պատրաստակամ էին փոխադրվել Արցախ և այնտեղ սկսել հայեցի նոր կյանք<sup>2</sup>:

Արևմտահայության շրջանում կատարած իմ ժողովրդագիտական գրառումներն ու դիտարկումները վկայում են.

- ա. Արցախահայոց բանահյուսությունն իր արմատներով նույնական է Հայաստանի և Կիլիկիայի մշակութային ավանդներին: Հանգամանք, որը վկայում է նրանց ազգային-ավանդական ակունքների համանմանությունը:
- բ. Պյատիգորսկում՝ նոր, ռուսական միջավայրի ազդեցությունը 1960-ական թվականներից արդեն իսկ իրեն զգացնել է տվել գաղթական արցախահայերի բանավոր խոսքում:
- գ. Համայն աշխարհի հայության էթնոհոգեբանության մեջ կատարվում են որոշակի տեղաշարժեր. ազատագրված Արցախի գաղափարի շուրջ համախմբվում են աշխարհասփյուռ հայ ժողովրդի տարբեր հատվածները: Արցախը Մայր Հայաստանի հետ դառնում է նոր ժամանակների նոր հայրենադարձության սրբազան տեսլականը:

---

<sup>1</sup> **Սվազյան Վ.**, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ԳԳ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2000:

<sup>2</sup> Դերգորյան գրառումներ (2005 թ. ). Հակոբ Մութաֆյանի (ծնվ. Դեր-Էլ-Ջոր, 1980 թ. ) գրույցը: Վ. Սվազյանի անձնական արխիվ (ծեռագիր):